



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ  
ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐ  
ՀՐԱՄԱՆ

N 979-Ա/2

03.08.2020թ.

**«ՄԵԿՆԱՐԿ» ՏԱՂԱՆԴԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ԾՐԱԳՐԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ  
ՀՅՈՒՐԱԽԱՂԵՐԸ ՀՀ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՈՒՄ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ  
ԵՎ ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության 2020 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով և Հայաստանի Հանրապետության վարչապետի 2019 թվականի հունիսի 1-ի N 661-Լ որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության կանոնադրության 19-րդ կետի 20-րդ ենթակետով՝ «Մեկնարկ» տաղանդի զարգացման նպատակային ծրագրի անդամների հյուրախաղերը ՀՀ Տավուշի մարզում իրականացման նպատակով՝

**Հ Ր Ա Մ Ա Յ ՈՒ Մ Ե Մ**

1. Հաստատել «Մեկնարկ» տաղանդի զարգացման նպատակային ծրագրի անդամների հյուրախաղերը ՀՀ Տավուշի մարզում ծրագիրը՝ համաձայն հավելվածի:

2. «Հայաստանի Հանրապետության 2020 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի N 1 հավելվածի N 2 աղյուսակի «1168. Արվեստների ծրագրի» «11005. Մշակութային միջոցառումների իրականացում» միջոցառման համար (տող՝ «Աջակցություն այլ մշակութային միջոցառումների և ծրագրերի իրականացմանը») Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությանը նախատեսված գումարներից հատկացնել 1210.8 հազար (մեկ միլիոն երկու հարյուր տաս հազար ութ հարյուր) դրամ՝ 2020 թվականի

օգոստոսին «Մեկնարկ» տաղանդի զարգացման նպատակային ծրագրի անդամների հյուրախաղերը ՀՀ Տավուշի մարզում իրականացնելու համար:

3. Նախարարության ֆինանսաբյուջետային վարչության պետին՝ սույն հրամանն ուժի մեջ մտնելուց հետո 15-օրյա ժամկետում նախապատրաստել և Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության (այսուհետ՝ նախարարություն) գլխավոր քարտուղարի պարտականությունները կատարողի ստորագրմանը ներկայացնել սույն հրամանի 2-րդ կետում նշված գումարը «Հայաստանի երգի պետական թատրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությանը հատկացնելու մասին պայմանագիր (այսուհետ՝ պայմանագիր):

4. Նախարարության ժամանակակից արվեստի և ֆինանսաբյուջետային վարչությունների պետերին՝ Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2020 թվականի մարտի 16-ի թիվ 343-Ա/2 հրամանին և կնքվող պայմանագրին համապատասխան իրականացնել պայմանագրի կատարման նկատմամբ հսկողություն, պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարման, բովանդակային և ֆինանսական հաշվետվությունների ընդունման և պայմանագրով նախատեսված աշխատանքների հանձնման-ընդունման արձանագրությունների կազմման և ստորագրման գործառույթները:

5. Սույն հրամանի կատարման հսկողությունը վերապահել Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի տեղակալ Ա. Խզմայանին:

Նախարար

Արայիկ Հարությունյան

X



Հավելված  
 ՀՀ կրթության, գիտության,  
 մշակույթի և սպորտի նախարարի  
 ----- 2020 թ.  
 N ----- հրամանի

**Ծ Ր Ա Գ Ի Ր**

«Մեկնարկ» տաղանդի զարգացման նպատակային ծրագրի անդամների հյուրախաղերը ՀՀ Տավուշի մարզում

1	<b>Կազմակերպության անվանում</b>	«Հայաստանի երգի պետական թատրոն» ՊՈԱԿ
2	<b>Կազմակերպության գտնվելու վայր</b>	ք. Երևան, Խանջյան 13/1
3	<b>Ծրագրի անվանում</b>	«Մեկնարկ» տաղանդի զարգացման նպատակային ծրագրի անդամների հյուրախաղերը ՀՀ Տավուշի մարզում
3.1	<b>Բովանդակություն</b>	<p>Ծրագրի շրջանակներում «Մեկնարկ» տաղանդի զարգացման նպատակային ծրագրի անդամներ և անվանի արվեստագետներ կայցելեն ՀՀ Տավուշի մարզ: Ծրագրի շրջանակներում կկազմակերպվեն վերոնշյալ ծրագրի պատանի երաժիշտ-կատարողների 2 համերգ սահմանամերձ համայնքներում ապրող երեխաների համար: Համերգային ծրագրում ընդգրկված են հայ և արևմտյան կոմպոզիտորների ստեղծագործություններ: Վերջին տարիների ընթացքում «Մեկնարկ» տաղանդի զարգացման նպատակային ծրագրի պատանի երաժիշտները ընդգրկվել են նաև շուրջ 150 տարբեր միջոցառումներում՝ մրցույթներ, փառատոներ, համերգներ: Նրանցից շատերը արժանացել են հանրապետական և միջազգային մրցույթների դափնեկրի կոչմանը:</p> <p>Ծրագրի շրջանակներում կնկարահանվի և կպատրաստվի հյուրախաղերը ներկայացնող, դրա մասին պատմող 1 տեսահոլովակ</p>
3.2	<b>Նպատակ</b>	Ծրագիրը միտված է ՀՀ մարզերում նպատակային մշակութային քաղաքականության իրականացմանը, միջոցառումների միջոցով ՀՀ մարզերում մշակութային կյանքի աշխուժացմանը, խթանմանն ու զարգացմանը, մշակույթի համաչափ տարածքային զարգացում, մարզերում մշակութային կյանքին քաղաքացու մասնակցության իրավունքի, բնակչության բոլոր շերտերի համար մշակութային արտադրանքի և ծառայությունների հասանելիության և մատչելիության ապահովում, մշակույթի տարածքային համաչափ զարգացում

3.3	<b>Անցկացման ժամկետ</b>	Օգոստոսի 5-6, 2020թ.
3.4	<b>Անցկացման վայր</b>	ՀՀ Տավուշի մարզ
3.5	<b>Ակնկալվող արդյունքներ</b>	Ծրագրի իրականացման արդյունքում ակնկալվում է, որ արտադարձական կրթություն իրականացնող հաստատությունների միջև կստեղծվեն նոր կապեր, ծրագրի անդամների և մարզերի երաժշտական և արվեստի դպրոցներն առավել համակարգված և նպատակային համագործակցության արդյունքում կարձանագրվեն իրենց առջև դրված խնդիրների նպատակային լուծումներ, կստեղծվեն նպաստավոր պայմաններ՝ միասնական մշակութային-կրթական դաշտի ձևավորման և ըստ այդմ՝ ոլորտի մշակութային քաղաքականության իրականացման նպաստավոր պայմաններ, ինչպես նաև շնորհալի պատանիների, արվեստագետների շփումների սերտացումը, փորձի փոխանակումը և տարածումը, մշակույթի կյանքի աշխուժացում ՀՀ մարզերում:
3.6	<b>Ոչ ֆինանսական ցուցանիշներ</b>	2 համերգ